ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2020/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/20, 23.01.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Արգելել «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում:
2. Պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում, ընթացակարգի մասնակիցներին հրավիրելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան Մելիք Ադամյան 1
«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյանից
Հասցե՝ Նորապատ 9փ, 3տ., հեռ. 099546900
e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու <<Նիկոլայ Նասիբյանի անվան
Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15

Գնանշման հարցման ընթացակարգի
ծածկագիր «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1»
Գնման առարկա՝ <<Բժշկական սարքավորումներ և գործիքներ>>

ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան

1.1 <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ ն <<Բժշկական սարքավորումների և գործիքների>> ձեռքբերման նպատակով 2019թ. դեկտեմբերի 2-ին հրապարակել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը կազմակերպվել է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

1.2 Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուն չի ծանուցել մասնակիցներին գների նվազեցման շուրջ՝միաժամանակյա բանակցությունների մասին և հրապարակել է պայմանագիր կնքելու մասին որոշում՝ խախտելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Պատվիրատուի կողմից ուղարկվել է գրություն մեր ընկերության էլեկտրոնային փոստին: Նշված գրությամբ պատվիրատուն հայտնել է հետևյալը
<<.....«Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը հայտարարված է եղել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետով, որը նշանակում է, որ պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը ներկայացրել է նախահաշվային գներով: Իսկ մենք պարզել ենք և մեր լիազոր մարմնից, և ֆինանսների նախարարությունից, որ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետով հայտարարված մրցույթները գների նվազեցման նպատակով բանակցություններ կարող են չվարել:>>:

Հայտնում եմ Ձեզ, որ պատվիրատուի կողմից հրապարակված հրավերում որևէ տեղ մենք չգտանք նշում այն մասին, որ հրավերը կազմակերպվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետով, ինչպես նաև պատվիրատուի կողմից ուղարկված

գրությանը կցված չեն ոչ լիազոր մարմնի և ոչ էլ ֆինանսների նախարարության պարզաբանումները:

Հարկ է նշել, որ gnumner.am կայքում նոյեմբերի 22-ին հրապարակված <<2019թ. Գնումների պլան>>-ում, մասնավորապես 21 և 22 էջերում որևէ նախահաշվային գին նշված չէ՝ հրավերով պահանջվող ապրանքների համար:

2020թ. հունվարի 21-ին պատվիրատուն հրապարակել է երկու փաստաթուղթ

1. «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը՝ թվագրված 2019թ. դեկտեմբերի 19-ով: Ի դեպ, այդ ամսաթվի դրությամբ դեռ ընթացակարգը բողոքարկված էր և անհասկանալի է, թե ինչպես է պատվիրատուն ընտրված մասնակից ճանաչելու որոշում կայացրել:
2. «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը, որը թվագրված է 2019թ. դեկտեմբերի 19-ով: Սրա իրավունքը նույնպես պատվիրատուն չուներ: Մեր կողմից բողոքը ներկայացվել է այն բանից հետո, երբ gnumner.am կայքում հայտնաբերել ենք պատվիրատուի կողմից 21.01.2020թ. հրապարակված վերոնշյալ փաստաթղթերը: Այսինքն մեր ընկերությունը չէր կարող բողոքարկել պատվիրատուի 2019թ. դեկտեմբերի 19-ի գործողությունները, քանի որ դրանց մասին պատվիրատուն հրապարակել է 2020թ. հունվարի 21-ին:

2. **Բողոքի փաստացի և իրավական հիմքերը**

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների համաձայն <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ մասի հիման վրա իրականացվող մրցույթներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված <u>բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ</u>, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3. Բողոքի պահանջը

1. **Արգելել <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ >> ՓԲԸ-ի <<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու <<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում:**
2. **Պարտադրել պատվիրատուին ընդունել որոշում, ընթացակարգի մասնակիցներին հրավիրելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:**

Կից ներկայացվում է

1. «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը:
2. «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պատվիրատուի կողմից մեր ընկերության էլեկտրոնային փոստին ուղարկված գրությունը:
4. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
5. Պետռեգիստրի վկայականը:

Վերիտաս ՍՊԸ տնօրեն Աշոտ Մխիթարյան